

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով
Ո Ր Ո Շ ՈՒ Մ 51/1
12 սեպտեմբերի 2017թ.

Քննարկվեց Ա/Ձ Սոնա Դուրյանի գանգատն առաջադրված պարտավորությունների վերահաշվարկ կատարելու վերաբերյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Հանձնաժողովի 18.10.2016թ. նիստում քննության է առնվել Ա/Ձ Սոնա Դուրյանի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ 22.08.2016թ. թիվ 2133954 ակտի (այսուհետ նաև՝ Ակտ) դեմ: Արդյունքում ընդունվել է թիվ 29/4 որոշումը, որի համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ 22.08.2016թ. թիվ 2133954 ակտը թողնվել է անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժվել: Այնուհետև, Ակտը վիճարկվել է դատական կարգով (վարչական գործ թիվ ՎԴ/8401/05/16): ՀՀ վարչական դատարանի 10.03.2017թ. վճռով Ա/Ձ Սոնա Դուրյանի հայցն ընդդեմ ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ-ի՝ 22.08.2016թ. թիվ 2133954 ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժվել է: Միևնույն ժամանակ, Ակտով առաջադրված պարտավորության մի մասը հաշվանցվել է առկա գերավճարից, իսկ մյուս մասը՝ սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով կրկնապատկվել է:

Նշվեց նաև, որ ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43¹-րդ հոդվածի դրույթներով Ա/Ձ Սոնա Դուրյանի հասցեով ուղարկվել է ծանուցում, որով տեղեկացվել է նիստի անցկացման մասին: Սակայն Ա/Ձ Սոնա Դուրյանը նիստին չի ներկայացել: Բացի այդ, նիստի մասին Ա/Ձ Սոնա Դուրյանին փորձեր են կատարվել տեղեկացնել նաև հեռախոսի միջոցով, ինչը, սակայն, նույնպես չի հաջողվել:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե վարչական ակտի ընդունումը հնարավոր է միայն այդ ակտի հասցեատիրոջն ի հայտ բերելու դեպքում:

Նույն հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ վարչական մարմինը կարող է կասեցնել վարչական վարույթը, եթե վարչական ակտի հասցեատերը բացակայում է, և վարչական մարմինը, նախքան վարչական ակտ ընդունելը, անհրաժեշտ է համարում նրա ներկայությունը՝ վարույթին առնչվող որոշ կարևոր հանգամանքներ նրանից պարզելու համար:

Հանձնաժողովը գտնում է, որ գանգատի վերաբերյալ իրավաչափ որոշում կայացնելու համար անհրաժեշտ է Ա/Ձ Սոնա Դուրյանի ներկայությունը՝ վարույթին առնչվող որոշ կարևոր հանգամանքներ նրանից պարզելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Ա/Ձ Սոնա Դուրյանի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:
Սույն որոշմանը համաձայնակցություն է ցուցաբերում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեղական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ